ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Դրոյի փողոցի հ.16 շենքի հ.9՝ 40,9քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.11.2012թ. հ. 01-1652 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ջալիլ Կայմազովին, Թեհմինե Նամոյանին, Թեմուր Կայմազովին, Նարե Կայմազովային և Նանե Կայմազովային։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ջալիլ Կայմազովը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Դրոյի փողոցի հ.16 շենքի հ.9՝ 40.9 քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իր ընտանիքի անդամների անվամբ մասնավորեցնելու խնդրանքով։

Ներկայումս նշված հասցեում գտնվող բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 19.11.2012թ. հ.01-1652 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը)։

Համաձայն «Սևակ» համատիրության նախագահի կողմից 24.10.2011թ. տրված տեղեկանքի Ջալիլ Կայմազովը 2006 թվականից իր խնամքի տակ է վերցրել նշված հասցեի նախկին սեփականատեր Ռաիսա Պետրակովային, նրա փոխարեն կատարել է բնակարանի հետ կապված բոլոր վճարումները, ապահովել է սնունդով։ Ջալիլ Կայմազովը իր միջոցներով կատարել է վերանորոգման աշխատանքներ, տեղադրել է դուռ, վերանորոգել է ջրամատակարարման խողովակները և կոյուղագծերը։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 23.01.2012թ. հ.հ.ԿԽ-2/93 և ԿԽ-2/94 տվյալների համաձայն, Ջալիլ Կայմազի Կայմազովի և Թեհմինե Ռուստամի Նամոյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ։

Ջալիլ Կայմազովը իր ընտանիքի անդամների հետ ազգությամբ եզդի է և Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ։

Ջալիլ Կայմազովը իր ընտանիքի անդամների՝ Թեհմինե Նամոյանի, Թեմուր Կայմազովի, Նարե Կայմազովայի, Նանե Կայմազովայի հետ բնակվում էին Լեփսիուսի հ.14 շենքի հ.15 բնակարանում ծնողների՝ Կայմազով Կայմազ, Կայմազովա Գյուլիզարի, եղբոր և նրա ընտանիքի՝ Կայմազով Ագիթի, Խշոյան Իրմայի, Կայմազով Կայմազի, Կայմազով Թենգիզի հետ։ Հաշվի առնելով նրա ընտանեկան պայմանները, Ռաիսա Պետրակովայի մահից հետո, սկսած 2010 թվականից, Կայմազովը իր ընտանիքի հետ առանց հաշվառման, իսկ 31.08.2012 թվականին Լեփսիուսի հ.14 շենքի բն.15 հասցեի հաշվառումից դուրս գալով, հաշվառվելով Դրոյի փողոցի հ.16 շենքի հ.9՝ հասցեում մինչ օրս բնակվում է նշված հասցեի 40.9քմ մակերեսով բնակարանում։

Նկատի ունենալով այն, որ Ջալիլ Կայմազովը իր միջոցներով է վերանորոգել բնակարանը, վճարել բոլոր կոմունալ և սպասարկման վճարումները, ինչպես նաև այն, որ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, նշված հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի Ջալիլ Կայմազովի ընտանիքի բնակարանային հարցը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ